1. **Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Շուռնուխի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի**

**կենսաբանություն /բնագիտություն/– 5,75 ժամ , քիմիա – 3,5 ժամ , աշխարհագրություն – 3,5 ժամ , ինֆորմատիկա – 2,25 ժամ, ռուսաց լեզու – 8,75 ժամ, դասվար – 15 ժամ, անգլերեն – 6,25 ժամ, հասարակագիտություն – 2 ժամ, երաժշտություն – 0,75 ժամ կերպարվեստ - 0,75 ժամ ուսուցչի թափուր տեղ/երի համար**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **2022թ հոկտեմբերի 19-ից մինչև նոյեմբերի 1-ը** ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2022 թ. նոյեմբերի 3-ին՝ ժամը 14:00-ին ՀՀ Սյունիքի մարզի Շուռնուխի միջնակարգ դպրոցում**: Տեղեկությունների համար զանգահարել (094)-64-49-55 հեռախոսահամարով: